սակ գրականութեան ճաշակը, որ աշակերտները դիմելով իրենց ուսուցչին խնդրեցին, որպէս զի նման մի աշխատութիւն էլ ինքը կատարի։ Ամենից առաջ բնական է մատնել Եւթաղ Աղէքսանդրացու Նոյնպիսի աշխատութեան մասին, որ նա կատարել է Ն. Կ. վերաբերմամբ և որ հընուց թարգմանուած էր հայերէն լեզուով և ապա գըտնում ենք, որ այդպիսի գրականութիւն իսկապէս հայերի մէջ գոյութիւն ունէր, հարկաւ ոչ առանց հեռևողութեան յոյն և ասորի գրականութեան։ Այս դէպքում առանց դիմելու օտարազգի օրինակների, լաւագոյն և յայտնի նմուշներ ունինք հէնց մեր գրականութեան մէջ։ Այդ ճիւղը մեր մէջ, ինչպէս ասացինք, ամենևին չէ ուսումնասիրուած և մենք կաշխատենք մի քանի փորձ անել այդ ուղղութեամբ։ Հարուստ նիւթ կայ ամենից առաջ ս. Գրքի ձեռագրերում, ապա ամբողջական դրուածքներ կան, ինչպիսին է Գրիգոր եպիսկոպոսի Պատճառաց գիրքը և վերջապէս Ժողովածու անուան տակ յայտնի ձեռագրերում այդպիսի նիւթերի առատ պաշար կայ։

Մեսրոպ վարդապետ

ՏԱՃԿԱՀԱՅՊ

Երուսաղէմ. «Արարատի» նախորդ համարում յիշատակել էինք, որ Կ. Պոլսի պատրիարքարանը երկու կարևոր պաշտօնական անձնաւորութիւնների ընտրել էր Երուսաղէմ ուղարկելու որպէս քննիչ։ Ապա իմացուեցաւ, որ Կառավարութիւնը թոյլ չը տուեց դոցա Երուսաղէմ գնալ, (պատճառն ի հարկէ անյայտ է), որի համար Սր. Օրմանեանը ազգաւ դիմումներ էր արել Բ. Դրան և խնդիրը տեղեկագրով ծանօթացրել, որի հետևանքն ահա գրում է «Բիւզանդիանը»։

Երուսաղէմի վանքը քննիչներ առաքելու համար Ազգ. Պատրիարքարանի կողմէ մատուցած խնդիրքն արժանացած է Բարձրագոյն հաւանութեան։—Խառն ժողովոյ առաջիկայ նստին մէջ պիտի ըլլան այս մասին վերջնական կարգադրութիւնները։

Պատրիարքարանի որոշումները շատ հաճելի չէին երևացել

Երուսաղէմի միաբանութեան մի կողմին: Դոցանից Դէորգ եպ. Երիցեանը (Պոլսում Եր. Պատր. Փոխանորդ) իւր անհամաձայնութիւնն արտայայտել էր հրաժարական տալով իր պաշտօնից, իսկ միւս մի քանի միաբանները բացատրութիւններ էին տուել պատրիարքարանի որոշման դէմ: Այդ խնդրին ակնարկելով «Բիւզանդիոն» ասում է.

Խառն ժողովոյ նստին մէջ որոշուած էր, որ բացատրութիւն պահանջուի Եր. Պատր. փոխ. Տ. Դէորգ եպ. Երիցեանի Երուսաղէմի Պատրիարքին ուղղած հրաժարագրի ինչ ինչ կէտերու մասին: Նաև որոշուած էր հարկ եղած պատասխանները տալ Երուսաղէմի ել և մտից տեսուչ Տ. Ղևոնդ վրդ-ին, Վահրամ վրդ. Աղաբեանի, Տ. Ներսէս եպս.-ի * և այլ միաբաններու, որք Երուսաղէմայ վանքին վերաբերեալ խնդրոց վրայ ինչ ինչ դիտողութիւններ հաղորդած էին: Խառն ժողովը նկատելով, որ դիտողութիւնները ցարդ չեն ղրկուած, որոշեց անմիջապէս ղրկել:

Սսոյ թեմը. Սիսէն կը գրեն «Բիւզանդիոնին». Ծննդեան ութօրէքին Ն. Ս. Օծութիւն Տ. Սահակ կաթուղիկոս հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանելով, Կիլիկիոյ թեմերու համար քանի մը հոգի քահանայ ձեռնադրած է:

Տ. Սահակ կաթուղիկոսին հրամանաւ Տ. Վաղարշակ վրդ. քննիչի պաշտօնով Հաճըն գնաց և Ծնունդէն վերջը վերադարձաւ. հոն թաղական խորհրդի նոր ընտրութիւն կատարած է, և տեղւոյն ժողովրդին կրթական և բարոյական վիճակին վրայ ընդարձակ տեղեկագիր մը մատոյց Ս. Օծութեան:

Աղթամարի թեմը. Աղթամարի ընդարձակ թեմի կառավարութիւնը խիստ անմխիթարական է թէ կրթական և թէ բարոյական տեսակէտներից: Այդ իրողութիւնը պատկերացնող շատ տեղեկութիւնների ենք պատահում Պոլսի թերթերում: Տեղապահ Արսէն վարդապետն ամեն կերպով անհամապատասխան է այդ կարևոր պաշտօնին և բախտի բերմամբ՝—լինելով հանգուցեալ Խաչատուր կաթուղիկոսի ազգականը,—ձեռք է բերել այդ իշխանութիւնն և ահա երկար տարիներ վարում է ի վնաս այդ թեմի հայ ժողովրդեան յառաջդիմութեան: Պատրիարքարան հասնող բազմաթիւ բողոքագրերից ստիպուած, Խառն ժողովը որոշել էր քննութեան համար այնտեղ ուղարկել Վանայ ա-

* Ծանօթ. Մի ուրիշ յուր հաղորդում կը, որ Սուլթանը Տ. Ներսէս եպ. ին եւ Տ. Ղեւոնդ վրդ.-ին նորերս շնորհել է Բ. կարգի Մէջիդիէի պատուանշան, թէ ինչ ծառայութեան փոխարէն, այդ յայտնի չէ:

առաջնորդ Տ. Սահակ եպ.-ին (դարձեալ մի շատ անյարմար մարդ այդ պաշտօնին) և մի քանի ուրիշ մարդկանց: Բայց այդ մասին կարդում ենք «Բիւզանդիում».—

Աղթամարայ վանքին մատակարարութիւնը քննելու պաշտօն ունեցող յանձնաժողովն հրաժարական ղրկած ըլլալով, ժողովը մերժեց և որոշեց այս մասին կարևորը գրել Աղթամարայ կաթող. Տեղապահ Տ. Արսէն վրդ.-ի:

Նուիրատուութիւններ եւ կտակներ. Պոլսոյ վերջին Նուպար 1000 ոսկի (9000 ր.) նուիրեր է Աղէքսանդրիոյ ազգ. վարժարանին իր որդւոյն Առաքել պէյ Նուպարի ընդ Օր. Նեվրիկ Աղանի նշանախօսութեան առթիւ: Նուիրուած դրամարէն մէյմէկ ամսական պիտի տրուի երբև նոյնէր ուսուցիչներու, և կարօտ ուսանողներուն ալ զգեստ պիտի հայթայթուի:

Աղէքսան էֆ. Թօփալեան՝ իր որդւոյն Գուրգէն էֆ.-ի ընդ Օր. Նուարդ Գ. Աղանեանի ամուսնութեան առթիւ՝ բարեհաճած է 50 ոսկի նուիրել Ազգ. հիւանդանոցին:

Նոր Նախիջևանցի Յովհաննէս Ամէմեան ազգայինը 120,000 ռուբլիի հարստութիւնը կտակած է Կ. Պոլսի Պատրիարքարանին, որուն տոկոսը պիտի գործածուի ի նպաստ աղքատներու և աղքատիկ վարժարաններու:

Պրուսայից գրում են «Բիւզանդիոնին».

—Առաջնորդ Տ. Յովհաննէս որբաղանն անցեալ կիրակի քահանայ ձեռնադրեց Դէորդեան ճեմարանի շրջանաւարտ, ընիկ Պիլէճիկցի և այժմ Պրուսայաբնակ Յարութիւն Հէքիմեանը: Խարտաւիլակութեան պաշտօնը կատարեց առաջն. Փոխ. Տ. Վարդան վրդ. Գասպարեան: Օծման արարողութիւնն հանդիսաւոր եղաւ ի ներկայութեան հոծ բազմութեան մը: Նորընծան Տ. Մատթէոս կոչուեցաւ:

—Ինչպէս յայտնի է, թէև մեր հին ձեռագիրների մի մասը հաւաքուած է մի քանի կեդրոններում, սակայն դեռ մի կարևոր մասը ցրուած է մնում դանազան վանքերի և եկեղեցիների անկիւններում և մասնաւոր մարդկանց մօտ՝ անխնամ վիճակի մէջ, որոնք ամեն րոպէ կորչելու վտանգի մէջ են, թէ տգիտութեան և թէ մի քանի շահամոլ և ազգային արժանապատուութեան զգացմունքից զուրկ մարդկանց պատճառով: Վերջին օրինակս ապացուցանող մի քանի ցաւալի յայտնութիւններ մատնանիշ արին վերջերս Պոլսի թերթերը, որը մի քանի խօսքով այսպէս է գրում «Բիւզանդիոնը».

Վանէն Տնտես. Խորհրդոյ ղրկուած գրով մը բողոք բարձուած էր Խաչիկ էֆ. Լևոնեանի դէմ, յայտնելով թէ յիշեալն

Աղթամարի Զաքար սարկաւագէն ձեռք բերեր է հին գրչագիր Աւետարան մը, և կապոյտ Կողմ Ս. Յակոբայ վանքին վերաբերեալ Աստուածաշնչի հաղուագիւտ օրինակ մը և հին Սաղմոս մը ինչպէս նաև աւետարան մը ուրիշ տեղէ, և այդ գրչագրերն Անդլիացի հնախոյզի մը ծախեր է: Խորհուրդը, նկատելով, որ ասկէ առաջ նմանօրինակ վաճառում մ'ալ Թիւրէպոլուի մէջ տեղի ունեցած և այս մասին կարևորը Ս. Պատրիարքին գրուած էր Խորհրդին կողմէ, այսպիսի թանկագին Սրբազան մատեաններու և առարկաներու յապահովի պահպանման մասին իր տեսութիւնները գծեց և որոշեց յայտարարել Ս. Պատրիարքին ի պարտուպատշաճ տնօրինութիւն:

Շատ զարմանալի է, որ վերոյիշեալ էֆէնդին, չնայած այդ ամօթալի խաչագողութիւններին, ազգային հասատատութիւնների մէջ պաշտօն էլ ունի, ինչպէս ինքը համեստութեամբ պարծենալով, անձամբ գրել էր № 9 «Մշակում» իր մի թղթակցութեան մէջ, թէ «Պտիկ ձայն մ'ալ ես ունիմ» երկու որբանոցների «աչալուրջ» հոգաբարձութեան կազմի մէջ: Յաւալի հակասութիւն:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Տարւոյս ապրիլ 2 թուակիր պաշտօնական ծանուցման համեմատ բացուած քարոզի մրցման պայմանաժամ որոշուած էր հոկտեմբեր ամսոյ վերջը, և մինչև այնօր 35 տարբեր ծածկանուններու ներքև 56 գրուած քարոզներ հասան զանազան տեղերէ, որք և Ց. Ի. գրական յանձնաժողովոյ եկեղեցական անդամոց քննութեան ենթարկուեցան:

Հոկտեմբեր ամսոյն լրանալէն վերջ Տփղիսի աւագերէցներէն Տ. Արսէն աւագ քահանայ Բագրատունիի կողմէն յղուած 77 քարոզներու ստուար հաւաքածոյ մըն ալ հասաւ, առանց որոշում ըլլալու մրցման մատուցուելիք քարոզը, և հետևաբար ոչ միայն պայմանաժամին անցնելուն, այլ և այդ բազմաթիւ քարոզները միանգամայն մրցման ընդունելու անյարմարութեան առջև, մէկ կողմ թողուլ յարմարագոյն սեպուեցաւ:

Իսկ 56 քարոզները քննուեցան յանձնաժողովոյն նախագահ Սրբազան Պատրիարքին և Տ. Գէորգ եպիսկոպոս Երիցեանի և Տ.